բեգականն եղև անձրև մեղմագոյն և լինէր ցոլմունք ծիածանի և երբեմն որոտ և երբեմն անձրև. այլ եւ ոչ հանդարտեաց ծիածանն յերեկոյէս մինչև ի լուսանալ առաւօտուն՝ ընթանալով յարևմտից յարևելս, ի հիւսիսէ ի հարաւ, և ոմանք ի մէնջ զարմացուցին թէ Լոյս կամարաձև իջեալ ի վերայ Նորին: Որք պահապանք սահմանացն՝ հրամանաւ բռնաւորին բարձեալ զնա ի վերայ ուսեմն, տարեալ արկեալ զնա ի դուրս բացակայ քաղաքէն, և մայրն Նորին առեալ զնա թաղեաց ի մի տեղւոջ ի սահմանս Պալատին: Եւ կախաղանն մօտ ի սահմանս տանն արարին անօրէնքն, որ Փոքր Շուկայ ասի:

ԻԹ–ի ամսոյս, որ Ուրբաթ ասի, գիշերիս որ Շաբաթ լուսանայր, ելեալ գնացաք ի Սուրբ Լուսաւորիչ յուխտ, և անտի ի տուն Մղտեսի Կիրակոսին աչքի լոյս և բարի եկիր, զի յԵրուսաղէմայ եկն աւուրքս մօտակայ:

Յուլիս ամիս օր Կիրակի: Առաւօտուս ի ժամ գնացաք և Սամուէլ հարեղան զպատարագն արար, և կրկին անդ գնացաք և կացաք բազում պատուով և զայս օր:

Եւ ի լուսանալ առաւօտուն՝ օր Բշի (2 Յ––լի) եկաք ի բնակութիւնս մեր: Եւ աւուրս Է–րդ ժամուն եղև զի հնչեաց հողմն մի յոյժ սաստիկ, զի զտանիսն յիրար ածեալ և զքիրէմիտս նմին կտոր կտոր ի վայր վայթէր և զխանի տանեաց զարճիճն ի մի կողմն ծալէր և զծառոցն զպտուղսն ողջամբ հարեալ ի վայր հոսէր և զճիւղսն կոտրատեալ և ի բաց հանէր և զծովու ալիսն մինչ ի պարիսպն հասուցանէր և ի ներսս հեղոյր եւ զփոշիս եւ զհողս զետնի պտուտ տալով բարձրացուցանէր յերկինս և զճառագայթս արեգականն արգիլոյր, որ եւ զչունչս երթևեկացն արգել՝